Արձանագրություն/1-ին/

<<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր բնակավայրի վարչական տարածքում 5ՄՎտ հզորությամբ արևային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ/1-ին քննարկում/:

2024թ. ապրիլի 12-ին ժամը 12:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ <<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր բնակավայրի վարչական տարածքում 5ՄՎտ հզորությամբ արևային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ/1-ին քննարկում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր բնակավայրի վարչական ղեկավար Ս.Եսայանը, <<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի տնօրեն Գ.Հախվերդյանը, ընկերության բնապահպանական խորհրդատու Զ.Զուտնայանը, համայնքի և բնակավայրի բնակիչներ:

Ելույթ ունեցան.

ՀՀ Գեղարքունիքի Զովաբեր բնակավայրի վարչական ղեկավար Ս.Եսայանը, նշեց որ Զովաբեր բնակավայրում անցկացվում են 1-ին հանրային քննարկումները: Համայնքը պատշաճ ծանուցված է, ամեն ինչ նորմայի սահմաններում է, մենք շահագրգռված ենք, որ <<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն իրականացնի իր գործունեությունը, կավելանան աշխատատեղեր, կբարելավվի համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը:

Ընկերության բնապահպանական խորհրդատու Զ.Զուռնաչյանը ներկայացրեց ՀՀ օրենսդրությունը, <<Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին >> ՀՀ օրենքի պահանջները:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչները, ովքեր միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությունը:

Հնչեցին հարցեր կապված սոցիալական ծրագրերի, աշխատատեղերի վերաբերյալ, ընկերությունը հավաստեց, որ համայնքի հետ կքննարկվեն և կնախատեսվեն սոցիալական ծրագրեր, ինչպես նաև աշխատողները հնարավորինս կլինեն մոտակա բնակավայրից:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ <<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր բնակավայրի վարչական տարածքում 5ՄՎտ հզորությամբ արևային կայանի կառուցման աշխատանքներին:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 2 թերթ:

Քննարկումների պատասխանատու և վարող՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր բնակավայրի վարչական ղեկավար Ս.Եսայան

Զեկուցող՝

Գ. Հախվերդյան <<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ տնօրեն